ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- սեպտեմբերի 2025 թվականի №----Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2025 թվականի հուլիսի 10-ին վարչական բողոք է ներկայացրել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով անվավեր ճանաչել Հանձնաժողովի 2025 թվականի մայիսի 29-ի №209-Ա որոշումը (այսուհետ՝ №209-Ա որոշում) և կայացնել նոր որոշում, այն է՝ Հանձնաժողովի կողմից 2018 թվականի դեկտեմբերի 21-ի №748-Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման թիվ ԼԷ №0633 լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգել նախկինում տրամադրված լիցենզիայի գործողության նույն ժամկետով:

2025 թվականի հուլիսի 10-ին հարուցվել է Ընկերության կողմից ներկայացված վարչական բողոքի քննարկման վարչական վարույթ, ինչի վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2025 թվականի հուլիսի 14-ի №ՄՄ/34.1-Մ2-5/34-2025 գրությամբ:

Հարուցված վարչական վարույթի շրջանակում քննարկվող հարցի վերաբերյալ Ընկերությունը 2025 թվականի հուլիսի 16-ի №5441-2025 գրությամբ հայտնել է, որ

լրացուցիչ դիրքորոշում, նյութեր կամ այլ տեղեկատվություն չեն ներկայացվում՝ հաշվի առնելով դրանք վարչական բողոքին կից ներկայացված լինելու հանգամանքը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 75-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական բողոքը քննարկվում է բողոքարկված վարչական ակտի իրավաչափության տեսանկյունից, իսկ հայեցողական լիազորության իրականացման դեպքում՝ նաև նպատակահարմարության տեսանկյունից:

Հանձնաժողովը, քննարկելով վարչական բողոքը №209-Ա որոշման իրավաչափության տեսանկյունից, արձանագրում է, որ այն ընդունվել է օրենքներին ու գործող այլ իրավակարգավորումներին համապատասխան: Մասնավորապես՝

2018 թվականի փետրվարի 7-ի ««Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» № ՀՕ-100-Ն օրենքով ամրագրված իրավակարգավորումների շրջանակներում Հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 21-ի №748-Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրվել է Հայաստանի Հանրապետության տարածքում էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման լիցենզիա մինչև 2025 թվականի հուլիսի 1-ը գործողության ժամկետով:

2025 թվականի ապրիլի 25-ի №Ե-1319-25 գրությամբ Ընկերությունը դիմել է Հանձնաժողով՝ Հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 21-ի №748Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված՝ էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման լիցենզիայի գործողության ժամկետը նույն ժամկետով, այն է՝ մինչև 2032 թվականի հունվարի 1-ը երկարաձգելու հայտով: Միաժամանակ, վկայակոչելով «Լիցենզավորման մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, Ընկերությունը նշել է, որ երաշխավորված մատակարարի լիցենզիայի գործողության երկարաձգման ժամկետը չի կարող պակաս լինել նախկինում տրված և գործող լիցենզիայի գործողության ժամկետից:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով 2018 թվականի փետրվարի 7-ի ««Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» № ՀՕ-100-Ն օրենքի «Անցումային դրույթներ» վերտառությամբ 38-րդ հոդվածի 3-րդ մասը, 2025 թվականի մայիսի 13-ի №ՄՄ/34.1-Մ2-5/2110-2025

գրությամբ հայցել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն)՝ որպես լիազոր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ծրագրից բխող դիրքորոշումը՝ էլեկտրաէներգիայի մատակարարման երաշխավորված ծառայության ապահովման համար անհրաժեշտ միջոցառման իրագործման, այն է՝ Ընկերությանը տրամադրված՝ էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ:

Ի պատասխան Հանձնաժողովի 2025 թվականի մայիսի 13-ի № ՄՄ/34.1-Մ2-5/2110-2025 գրության՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի մայիսի 23-ի №ԴԽ/22.4/17328-2025 գրությամբ հայտնվել է հետևյալը. «*Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրին (մինչև 2040 թվականը), Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040 թվականը) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» 2021 թվականի հունվարի 14-ի N 48-Լ որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հավանություն է տվել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրին (մինչև 2040 թվականը)՝ համաձայն N1 հավելվածի:*

Նույն հավելվածի «VI. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՇՈՒԿԱ» բաժնում ամրագրվել է էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման, իսկ դրա իրագործման համար՝ շուկայի նոր մոդելին անցում կատարելու անհրաժեշտությունը:

Նույն բաժնում արձանագրվել է նաև, որ շուկայի նոր մոդելին անցումը կիրականացվի առաջիկա մի քանի տարիների ընթացքում՝ երկարաժամկետ թիրախում ունենալով շուկայի լիարժեք ազատականացումը: Շուկայի նոր մոդելն արդեն իսկ այս փուլում կհենվի էլեկտրաէներգիայի առևտրի ժամանակակից կանոնների վրա, կգործի պահանջարկի և առաջարկի հավասարակշռման միջոցով և կսահմանի առևտրի ընթացքում շուկայի մասնակիցների պատասխանատվության մեխանիզմները:

Բարեփոխումների առաջին փուլին կհաջորդի «Էլեկտրաէներգետիկայի մասին» նոր օրենքի մշակումը, որը հաշվի կառնի ԵՄ դիրեկտիվների պահանջները, ինչը և սկիզբ կհանդիսանա բարեփոխումների երկրորդ փուլի համար: Բարեփոխումների այդ փուլի ընթացքում կդիտարկվեն լիարժեք մրցակցային շուկայի ձևավորման հնարավորությունները:

Որպես նշված օրենքի մշակման վերջնաժամկետ՝ համաձայն վերը նշված որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040 թվականը) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույց»-ի 4.6-րդ կետի, նախատեսված է 2023-2025 թվականները:

Նշված ծրագրի իրագործումն ապահովելու նպատակով, ինչպես գիտեք, ներկայումս քննարկումների փուլում է «Էլեկտրաէներգետիկայի մասին» նոր օրենքի նախագիծը (նախատեսվում է ուժի մեջ մտնել 2029թ. փետրվարի 1-ին), որն անդրադառնում է նաև երաշխավորված մատակարարի ինստիտուտին, մասնավորապես՝ նախատեսվում է երաշխավորված մատակարարի նշանակում մրցութային ընթացակարգով, ինչպես նաև՝ ժամանակավոր մատակարարի ինստիտուտի ներդրում, որին պատվիրակվելու է ներկայիս երաշխավորված մատակարարի գործառույթների մի մասը:

Հիշյալի շրջանակներում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը սահմանված կարգով շրջանառության է դրել նաև «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ, որով նախատեսվում է «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2018 թվականի փետրվարի 7-ի №ՀՕ-100-Ն օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասում «յոթ» բառը փոխարինել «2029 թվականի փետրվարի 1» բառերով:

Նախագիծը ս.թ. մայիսի 22-ին քննարկվել է Հայաստանի Հանրապետության ԱԺ համապատասխան հանձնաժողովում և սահմանված կարգով ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանը:

Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում էլեկտրաէներգիայի մատակարարման երաշխավորված ծառայության ապահովման համար անհրաժեշտ միջոցառումները մշակվում ու իրագործվում են համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ծրագրի և դրա իրագործմանն ուղղված միջոցառումների, այդ թվում՝ այդ ծրագրի իրագործման նպատակով մրցութային ընթացակարգով երաշխավորված մատակարարի նշանակում իրականացնելու պահանջ նախատեսող «Էլեկտրաէներգետիկայի մասին» նոր օրենքի նախագծի՝ (նախատեսվում է ուժի մեջ մտնել 2029թ. փետրվարի 1-ին) քննարկումների փուլում գտնվելու հանգամանքի հաշվառմամբ Նախարարությունն առաջարկում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության լիցենզիայի (էլեկտրաէներգիայի երաշխավորված մատակարարման) գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2029 թվականի փետրվարի 1-ը»:

«Լիցենզավորման մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիցենզավորված անձն իրավունք ունի որոշակի ժամկետով տրված լիցենզիայի գործողության ժամկետի ավարտից ոչ շուտ, քան 3 ամիս առաջ լիցենզիայի ժամկետը երկարաձգելու հայտ ներկայացնել լիցենզավորող մարմին:

Լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգվում է նախկինում տրված լիցենզիայի գործողության ժամկետի չափով, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

2018 թվականի փետրվարի 7-ի ««Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» №ՀՕ-100-Ն օրենքի «Անցումային դրույթներ» վերտառությամբ 38-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին յոթ տարի ժամկետով տրվում է լիցենզիայով սահմանված տարածքում երաշխավորված մատակարարի կարգավիճակ: Նշված ժամկետը լրանալուց հետո Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում էլեկտրաէներգիայի մատակարարման երաշխավորված ծառայության ապահովման համար անհրաժեշտ միջոցառումները մշակվում ու իրագործվում են համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ծրագրի:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրին (մինչև 2040 թվականը), Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040 թվականը) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 48-Լ որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հավանություն է տվել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրին (մինչև 2040 թվականը)՝ համաձայն N1 հավելվածի:

Նույն հավելվածի «VI. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՇՈՒԿԱ» բաժնում ամրագրվել է էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման, իսկ դրա իրագործման համար՝ շուկայի նոր մոդելի անցում կատարելու անհրաժեշտությունը:

Նույն բաժնում արձանագրվել է նաև, որ շուկայի նոր մոդելին անցումը կիրականացվի առաջիկա մի քանի տարիների ընթացքում, երկարաժամկետ թիրախում ունենալով շուկայի լիարժեք ազատականացումը: Շուկայի նոր մոդելն արդեն իսկ այս փուլում կհենվի էլեկտրաէներգիայի առևտրի ժամանակակից կանոնների վրա, կգործի պահանջարկի և առաջարկի հավասարակշռման միջոցով և կսահմանի առևտրի ընթացքում շուկայի մասնակիցների պատասխանատվության մեխանիզմները: Բարեփոխումների առաջին փուլին կհաջորդի «Էլեկտրաէներգետիկայի մասին» նոր օրենքի մշակումը, որը հաշվի կառնի ԵՄ դիրեկտիվների պահանջները, ինչը և սկիզբ կհանդիսանա բարեփոխումների երկրորդ փուլի համար: Բարեփոխումների այդ փուլի ընթացքում կդիտարկվեն լիարժեք մրցակցային շուկայի ձևավորման հնարավորությունները:

Որպես նշված օրենքի մշակման վերջնաժամկետ՝ համաձայն վերը նշված որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040 թվականը) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույց»-ի 4.6-րդ կետի, նախատեսված է 2023-2025 թվականները:

Ողջ վերոգրյալից հետևում է, որ գործող իրավակարգավորումների համաձայն լիցենզավորված անձն իրավունք ունի որոշակի ժամկետով տրված լիցենզիայի դեպքում նախկինում տրված լիցենզիայի գործողության ժամկետի չափով այդ ժամկետը երկարաձգելու հայտ ներկայացնել Հանձնաժողով: Որպես կանոն՝ լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգվում է նախկինում տրված լիցենզիայի գործողության ժամկետի չափով, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Տվյալ դեպքում օրենքով նախատեսված է այլ կարգավորում, այն է՝ երաշխավորված մատակարարի կարգավիճակի համար սահմանված ժամկետը լրանալուց հետո Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում էլեկտրաէներգիայի մատակարարման երաշխավորված ծառայության ապահովման համար անհրաժեշտ միջոցառումները մշակվում ու իրագործվում են՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ծրագրի, իսկ այդ ծրագրում տեղ գտած դրույթների բովանդակությունից և դրանց իրագործմանն ուղղված գործողություններից հետևում է, որ Ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման ԼԷ №0633 լիցենզիայով ամրագրված գործողության ժամկետը՝ կարող էր երկարաձգվել առավելագույնը մինչև 2029 թվականի փետրվարի 1-ը:

Անդրադառնալով Ընկերության այն փաստարկներին, որ՝

- «տվյալ դեպքում երաշխավորված մատակարարի լիցենզիայի գործողության երկարաձգման ժամկետը չի կարող պակաս լինել նախկինում տրված և գործող լիցենզիայի գործողության ժամկետից ...»,

- «Հանձնաժողովը որոշում կայացնելիս առաջնորդվել է Ընկերության կողմից դիմումով ներկայացված պահանջը չկարգավորող իրավական ակտերով կամ առհասարակ գոյություն չունեցող կամ ապագայում հնարավոր ընդունվելիք իրավական նորմերով՝ հիմքում դնելով բացառապես ենթադրություններ՝ ապագայում ոլորտը կարգավորող իրավանորմերի վերաբերյալ, անտեսելով որոշման կայացման պահին գոյություն ունեցող հստակ իրավակարգավորումները, որոնցով վերջինս պարտավոր էր առաջնորդվել». հարկ է արձանագրել հետևյալը.

«Լիցենզավորման մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի (Լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգվում է նախկինում տրված լիցենզիայի գործողության ժամկետի չափով, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ) և 2018 թվականի փետրվարի 7-ի ««Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» №ՀՕ-100-Ն օրենքի «Անցումային դրույթներ» վերտառությամբ 38-րդ հոդվածի 3-րդ մասի համադրումից ուղղակիորեն բխում է, որ Ընկերությունն, ի սկզբանե, չէր կարող իրավաչափ ակնկալիք ունենալ, որ էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման ԼԷ №0633 լիցենզիայով ամրագրված գործողության ժամկետը կարող է երկարաձգվել նախկինում տրված լիցենզիայի գործողության ժամկետի չափով.

Այսպես՝ «Լիցենզավորման մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ առկա է լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման երկու իրավական ռեժիմ. առաջին՝ լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգվում է նախկինում տրված լիցենզիայի գործողության ժամկետի չափով, երկրորդը՝ օրենքով նախատեսված է այլ բան: Այսինքն՝ որպես կանոն լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգվում է նախկինում տրված լիցենզիայի գործողության ժամկետի չափով, որպիսի կանոնից, սակայն, սահմանված է բացառություն, այն է՝ օրենքով նախատեսված է այլ բան: Հետևաբար, բոլոր այն լիցենզիաների դեպքում, երբ օրենքով նախատեսված է դրա ժամկետի երկարաձգման վերաբերյալ այլ կարգավորում, լիցենզավորված անձի նկատմամբ ընդհանուր կանոնն առ այն, որ «լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգվում է նախկինում տրված լիցենզիայի գործողության ժամկետի չափով» որևէ կերպ կիրառելի չէ:

Տվյալ դեպքում, ինչպես վիճարկվող որոշմամբ ևս արձանագրվել է, 2018 թվականի փետրվարի 7-ի ««Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» №ՀՕ-100-Ն օրենքի «Անցումային դրույթներ» վերտառությամբ 38-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է այլ բան, այն է՝ «սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին յոթ տարի ժամկետով տրվում է լիցենզիայով սահմանված տարածքում երաշխավորված մատակարարի կարգավիճակ: Նշված ժամկետը լրանալուց հետո

Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում էլեկտրաէներգիայի մատակարարման երաշխավորված ծառայության ապահովման համար անհրաժեշտ միջոցառումները մշակվում ու իրագործվում են համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ծրագրի»:

Անդրադառնալով Ընկերության այն փաստարկին, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրին (մինչև 2040 թվականը), Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040 թվականը) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 48-Լ որոշմամբ առհասարակ սահմանված չէ երաշխավորված մատակարարի լիցենզիայի երկարաձգմանը վերաբերող որևէ իրավական կարգավորում (ենթադրաբար նկատի ունենալով վարքագծի կանոնի սահմանման բացակայությունը), հարկ է արձանագրել հետևյալը.

Նախ, ո՛չ 2018 թվականի փետրվարի 7-ի ««Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» №ՀՕ-100-Ն օրենքի «Անցումային դրույթներ» վերտառությամբ 38-րդ հոդվածի 3-րդ մասով, ո՛չ էլ որևէ այլ իրավական ակտով օրենսդիրը նույն մասում վկայակոչված՝ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում էլեկտրաէներգիայի մատակարարման երաշխավորված ծառայության ապահովման համար անհրաժեշտ միջոցառումների մշակման ու իրագործման համար հիմք հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին չի ներկայացրել նման պահանջ: Այլ կերպ՝ որևէ օրենսդրական ակտով Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրին ներկայացված չէ պահանջ, որին պետք է համապատասխանի նշված ծրագիրը, ինչն էլ իր հերթին հնարավորություն կարող էր տալ ինչպես Ընկերությանը, այնպես էլ Հանձնաժողովին, քննարկման առարկա դարձնել ՀՀ կառավարության ծրագիրը:

Ավելին, Ընկերության փաստարկներն ըստ էության հանդիսանում են ՀՀ կառավարության ծրագրին տրվող գնահատականներ, որոնք, սակայն, չեն կարող հիմք

հանդիսանալ Ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման ԼԷ №0633 լիցենզիայով ամրագրված գործողության ժամկետը նախկինում տրված լիցենզիայի գործողության ժամկետի չափով երկարաձգելու համար:

Ավելին, «Լիցենզավորման մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի և 2018 թվականի փետրվարի 7-ի ««Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» №ՀՕ-100-Ն օրենքի «Անցումային դրույթներ» վերտառությամբ 38-րդ հոդվածի 3-րդ մասի համադրումից հետևում է, որ օրենսդիրը Հանձնաժողովին կաշկանդել է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում էլեկտրաէներգիայի մատակարարման երաշխավորված ծառայության ապահովման համար անհրաժեշտ միջոցառումների մշակման ու իրագործման համար հիմք հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրով, միաժամանակ չօժտելով այդ ծրագիրը գնահատելու, մեկնաբանելու իրավասությամբ, ինչով պայմանավորված՝ Հանձնաժողովը հայցել է և ստացել Նախարարության՝ որպես լիազոր մարմնի վերը արդեն մեջբերված դիրքորոշումը:

Հաշվի առնելով նաև Ընկերությանը լիցենզիա տրամադրելուց առաջ արդեն իսկ վերը նշված օրենսդրական ակտերի ուժի մեջ մտած լինելու հանգամանքը, նշված իրավակարգավորումներից հետևում է, որ ՀՀ կառավարության ծրագրով ոչ թե պետք է նախատեսվեն էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման լիցենզիայի երկարաձգման կոնկրետ ժամկետներ, այլ ծրագրով, ողջամտորեն, այնքանով որքանով այն հանդիսանում է ծրագիր, կարող են նախատեսվել ապագայում տեղի ունենալիք գործողություններ, որոնք պետությունն անհրաժեշտ է համարում Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում էլեկտրաէներգիայի մատակարարման երաշխավորված ծառայության ապահովման համար:

Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ծրագրով ամրագրվել է Էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման, իսկ դրա իրագործման համար՝ շուկայի նոր մոդելի անցում կատարելու անհրաժեշտությունը: Արձանագրվել է նաև, որ շուկայի նոր մոդելին անցումը կիրականացվի առաջիկա մի քանի տարիների ընթացքում, երկարաժամկետ թիրախում ունենալով շուկայի լիարժեք

ազատականացումը: Շուկայի նոր մոդելն արդեն իսկ այս փուլում կհենվի էլեկտրաէներգիայի առևտրի ժամանակակից կանոնների վրա, կգործի պահանջարկի և առաջարկի հավասարակշռման միջոցով և կսահմանի առևտրի ընթացքում շուկայի մասնակիցների պատասխանատվության մեխանիզմները: Բարեփոխումների առաջին փուլին կհաջորդի «Էլեկտրաէներգետիկայի մասին» նոր օրենքի մշակումը 2023-2025 թվականներին, որը հաշվի կառնի ԵՄ դիրեկտիվների պահանջները, ինչը և սկիզբ կհանդիսանա բարեփոխումների երկրորդ փուլի համար: Բարեփոխումների այդ փուլի ընթացքում կդիտարկվեն լիարժեք մրցակցային շուկայի ձևավորման հնարավորությունները:

Ներկայումս իրականացվում են նշված ծրագրի իրագործմանն ուղղված միջոցառումներ, այն է՝

1. քննարկումների փուլում է գտնվում «Էլեկտրաէներգետիկայի մասին» նոր օրենքի նախագիծ (նախատեսվում է ուժի մեջ մտնել 2029թ. փետրվարի 1-ին), որն անդրադառնում է նաև երաշխավորված մատակարարի ինստիտուտին, մասնավորապես՝ նախատեսվում է երաշխավորված մատակարարի նշանակում մրցութային ընթացակարգով, ինչպես նաև՝ ժամանակավոր մատակարարի ինստիտուտի ներդրում, որին պատվիրակվելու է ներկայիս երաշխավորված մատակարարի գործառույթների մի մասը:

2. Նախարարությունը սահմանված կարգով շրջանառության է դրել նաև «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ, որով նախատեսվում է «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2018 թվականի փետրվարի 7-ի №ՀՕ-100-Ն օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասում «յոթ» բառը փոխարինել «2029 թվականի փետրվարի 1» բառերով:

Այսինքն՝ Ընկերությանը լիցենզիա տրամադրելու պահին գործող իրավակարգավորումներից ակնհայտ է եղել, որ լիցենզավորված անձը պետք է չբացառեր իրեն տրված լիցենզիայի գործողության ժամկետը նույն ժամկետով երկարաձգելու կանոնի բացակայության հնարավորությունը, քանի որ իրեն լիցենզիա

տալու պահին գործող իրավակարգավորումներն ուղղակիորեն սահմանել են կանոն այն մասին, որ Ընկերությանը տրված լիցենզիայի գործողության ժամկետը լրանալուց հետո Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում էլեկտրաէներգիայի մատակարարման երաշխավորված ծառայության ապահովման համար անհրաժեշտ միջոցառումները մշակվում ու իրագործվում են համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ծրագրի:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քննարկելով վարչական ակտի վերաբերյալ բերված վարչական բողոքը՝ վարչական մարմինը, որն ընդունել է բողոքարկվող վարչական ակտը, իրավասու է՝

ա) բավարարելու բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ ճանաչելով վարչական ակտն անվավեր կամ առ ոչինչ կամ ընդունելով նոր վարչական ակտ.

բ) մերժելու բողոքը՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:

Վերոգրյալի հաշվառմամբ և հիմք ընդունելով 2018 թվականի փետրվարի 7-ի ««Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» № ՀՕ-100-Ն ՀՀ օրենքի «Անցումային դրույթներ» վերտառությամբ 38-րդ հոդվածի 3-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրին (մինչև 2040 թվականը), Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040 թվականը) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 48-Լ որոշումը և դրա իրագործմանն ուղղված միջոցառումները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 75-րդ հոդվածի 2-րդ մասը և 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը և հաշվի առնելով Նախարարության 2025 թվականի մայիսի 23-ի №ԴԽ/22.4/17328-2025 գրությունը՝ Հանձնաժողովը որոշում է

1. Մերժել Հանձնաժողովի 2025 թվականի մայիսի 29-ի №209-Ա որոշումն անվավեր ճանաչելու և Հանձնաժողովի կողմից 2018 թվականի դեկտեմբերի 21-ի №748-Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման թիվ ԼԷ №0633 լիցենզիայի գործողության ժամկետը նախկինում տրամադրված լիցենզիայի գործողության նույն ժամկետով երկարաձգելու վերաբերյալ նոր որոշում կայացնելու մասին Ընկերության 2025 թվականի հուլիսի 10-ի վարչական բողոքը:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
__ սեպտեմբերի 2025թ.